Նար-Դոս

Ողորմություն

Փայլուն արցունքով աչքերը լեցուն
Նիհար, մերկանդամ մի ծեր մուրացկան
Պարզեց հարուստին ձեռքը դողդոջուն:
Եվ դիրք բռնելով խիստ աղաչական,
Շշնջաց տխուր ձայնով կցկտուր.
«Աղա, թշվառիս ողորմություն տուր»

Չռեց աչքերը իսկույն հարուստը.
Կորի՛ր այստեղից, անպիտան ծերուկ,

Գոռաց, շարժելով նա ձեռնափայտը:
Եվ խեղճ ծերուկը, որպես մի մանուկ,
Անգութ հարուստին երկյուղով նայեց,
Եվ շուտ՝ դառնացած՝ յուր ճամփան քայլեց:

Մուրացկանն անցավ և մի բանվորի
Անվստահ կերպով յուր ձեռքը պարզեց.
Բանվորն աղքատ էր, շորը ցնցոտի.
Բայց նա գրպանից մի ինչ-որ հանեց,
Տվեց ծերուկին լռությամբ, թաքուն
Եվ շտապ քայլերով հեռացավ իսկույն:

22 հունվ. 1886.